# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 դեկտեմբերի 2022թ. թիվ 837-Ա

## Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետը և հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Աքորու միջնակարգ դպրոց» և «ՀՀ Լոռու մարզի Կաճաճկուտի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ների կառավարման խորհրդի նախագահի 2022 թվականի նոյեմբերի 29-ի գրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Կիմիկ Թենգիզի Պետրոսյանին վերանշանակել «ՀՀ Լոռու մարզի Աքորու միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում և նրա հետ 2018 թվականի հունվարի 22-ին կնքած աշխատանքային պայմանագրի ժամկետը երկարաձգել հինգ տարի ժամկետով՝ մինչև 2028 թվականի հունվարի 22-ը ներառյալ:
2. Կ.Պետրոսյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 23-ից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

01/12/2022

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 1
ք.Վանաձոր